ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԳՄՃՀ-ՀԲՄԽԾՁԲ-2024/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ **«04» «06» 2024թ.**
ժամը 12:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արտակ Ստեփանյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Վ.Գաբրիելյան/ԳԱ/,Վ.Մխիթարյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Մարկոսյան/ԳՀ/

1.Տեղեկություններ «ԳՄՃՀ-ՀԲՄԽԾՁԲ-2024/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի,օրվա և ժամի մասին

(Արտակ Ստեփանյան)

1.1 **«ԳՄՃՀ-ՀԲՄԽԾՁԲ-2024/01»** ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2024 թվականի մայիսի 20-ին, ժամը 12:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը՝ հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների մատուցման համար հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված

Հ/հ	Չափաբաժնի/չափաբաժինների/ անվանումը	Գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված գնման գինը/ՀՀ դրամ/
1	**Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Բաղրամյան 13 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ**	**595 410**
2	**Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Տիգրան Մեծի 30 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ**	**595 830**
3	**Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Տիգրան Մեծի 8 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների**	**465 160**
4	**Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի և Շողակաթ բնակավայրի ասֆալտապատված փողոցների փոսալցման և գծանշման, Ծափաթաղ և Արտանիշ բնակավայրերում ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ**	**223 360**

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների/անունների/ և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1 Հայտեր են ներկայացվել հետևյալ մասնակից/ների/ կողմից.

հ/հ	**Մասնակիցների անվանումները**	**Էլ.փոստ**
1	«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	ք.Երևան,Դավթաշեն,8փ,19/1տ,www.engineeringllc@yandex.com,հեռ.041020033
2	«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ,գ.Գեղամավան 2փ,3նրբ,տ 14,www.texno.shin@mail.ru,հեռ.093828121
3	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ	Գեղարք.մարզ,ք.Գավառ, Ազատության 2 ,հեռ 093185518, hvarlen@mail.ru

4. Տեղեկատվություն՝ բացվածյուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված

պահանջներին համապատասխան և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից գնահատման արդյունքները գնահատվել են բավարար:

5. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

5.1 « Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Չափաբաժին 1 Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Բաղրամյան 13 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ

հ/հ	Մասնակիցների անվանումները	Գնման գին	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	595 410	45 000	-------	45 000
2	«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ		390 000	-------	390 000
3	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ		400 000	80 000	480 000

Չափաբաժին 2 Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Տիգրան Մեծի 30 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ

հ/հ	Մասնակիցների անվանումները	Գնման գին	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	595 830	45 000	-------	45 000
2	«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ		390 000	-------	390 000
3	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ		400 000	80 000	480 000

Չափաբաժին 3 Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Տիգրան Մեծի 8 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ

հ/հ	Մասնակիցների անվանումները	Գնման գին	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	465 160	45 000	-------	45 000
2	«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ		340 000	-------	340 000
3	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ		330 000	66 000	396 000

Չափաբաժին 4 Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի և Շողակաթ բնակավայրի ասֆալտապատված փողոցների փոսալցման և գծանշման, Ծափաթաղ և Արտանիշ բնակավայրերում ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ

հ/հ	Մասնակիցների անվանումները	Գնման գին	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ	223 360	45 000	-------	45 000
2	«ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ		140 000	-------	140 000

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա«ԳՄՃՀ-ԳՀԾՁԲ-24/04» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

6.1**«ԳՄՃՀ-ՀԲՄԽԾՁԲ-2024/01»** ծածկագրով հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի ընտրված մասնակից էր ընտրվել **«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին 1-ին, 2-րդ, 3-րդ, 4 -րդ չափաբաժինների** մասով և տեղեկագրում հրատարակվել էր պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Հիմք ընդունելով ՀՀ պետական վերահսկողության ծառայության ղեկավարի տեղակալի գրությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը: 2024 թվականի մայիսի 22-ին գնումների պաշտոնական տեղեկագրում /այսուհետ Տեղեկագիր/ հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը պատճառաբանված

որոշման հիման վրա մերժել **«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին:** Այսպես՝ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների**

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ... »:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ***ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված***, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

(...)

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն՝ **մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:**

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ ***Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...):***

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով սահմանված իրավակարգավորումներով, գնահատող հանձնաժողովը որոշեց **«ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊ ընկերությանը (ՀՎՀՀ՝ 00155844) (այսուհետ՝ Ընկերություն)** հայտը մերժել,գնահատել անբավարար և ընտրված ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցներին:

6.2 **«ԳՄՃՀ-ՀԲՄԽԾՁԲ-2024/01»** ծածկագրով հրատապ բաց մրցույթի **1-ին, 2-րդ, 4 –րդ** չափաբաժինների մասով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **« ՏԵԽՆՈ ՇԻՆ» ՍՊԸ-ին, 3 –րդ** չափաբաժինների մասով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել **« ԹԻՎ 28 ՇՄՇ» ՍՊԸ-ին** և հրատարակել տեղեկագրում պայմանագիր կնքելու հայտարարություն:

6.3 Ընթացակարգի ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝կողմ 3, դեմ 0:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ստեփանյան /ԳԱՊ/_____

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գաբրիելյան /ԳԱ/ _____

Վ.Մխիթարյան/ԳԱ/ _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Մարկոսյան/ԳՀ/ _____